ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ _____ առ "___" _____ 2022թ.

«ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ տնօրեն
պրն Հ. Ավետիսյանին

[ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Ավետիսյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «բեռնատար մոտոցիկլ» ապրանքի ձեռքբերման նպատակով 2021թ. դեկտեմբերի 29-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ 2039400 (երկու միլիոն երեսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց)՝ բեռնատար մոտոցիկլի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 90 օրացուցային օր՝ մինչև 15.02.2022թ.:

Ձեր ընկերության կողմից սույն թվականի փետրվարի 18-ին մատակարարվել է բեռնատար մոտոցիկլ (հարկային-հաշիվ Ա № 3 առ 18.02.2022թ):

Ապրանքի ստուգման արդյունքում (Ակտ № 03.22-032 առ 14.03.2022թ.) հայտնաբերվել և արձանագրվել է, որ մատակարարված բեռնատար մոտոցիկլը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և հետ է վերադարձվել Ձեզ: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է թույլատրելի ժամկետում փոխարինել մատակարարված ապրանքը պայմանագրի պահանջներին համապատասխանող բեռնատար մոտոցիկլով: Պայմանագրով նախատեսված բեռնատար մոտոցիկլը «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը: Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները:

Գլխավոր տնօրենի տեղակալ
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս. Հ. Մաթևոսյան**

Կազմեց՝
ԳԲառաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08